YEREVAN STATE UNIVERSITY

BOARD OF TRUSTEES

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
СОВЕТ ПОПЕЧИТЕЛЕЙ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 ● Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 ● 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. հասցե՝ www.ysu.am, board@ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Երևանի պետական համալսարան»

հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝

2025 թ. դեկտեմբերի 26-ին տեղի ունեցած թիվ 3 նիստի

ՀՀ, ք. Երևան **26.12.2025 թ.**

2025 թվականի դեկտեմբերի 26-ին տեղի ունեցավ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստը, որին մասնակցեցին ՀՀ վարչապետի 2021 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1222-Ա որոշմամբ հաստատված՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 18 անդամներից 18-ը (գրանցման թերթիկը կցվում է):

Ներկայացված օրակարգը՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվության լսում և գնահատում:

(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի կառուցվածքի հաստատում:

(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի հաստիքացուցակի հաստատում:

(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի եկամուտների և ծախսերի համախմբված նախահաշվի հաստատում:

(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից կնքված մեկ հարյուր միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի հաստատում:

(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

Մինչ օրակարգի հաստատմանն անցնելը՝ Խորհրդի նախագահ Ս. Պապիկյանը տեղեկացրեց, որ թեև նոր օրենքով Հոգաբարձուների խորհրդի քարտուղարի վերաբերյալ կարգավորում չկա, այնուամենայնիվ աշխատակարգով սահմանված են քարտուղարի գործառույթներ, և առաջարկեց օրակարգում ներառել ՀԽ քարտուղարի ընտրության հարցը:

Այնուհետև Խորհրդի նախագահը առաջարկեց Խորհրդի թիվ 3 նիստի օրակարգը դնել հաստատման:

Քվեարկության արդյունքներ. **կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0**: Օրակարգը հաստատվեց միաձայն:

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղարի ընտրություն:

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի անդամ Քրիստինե Յախշյանն առաջարկեց ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի վարիչ Հայկ Քոչարյանի թեկնածությունը:

Օրակարգի 1-ին հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:**

Որոշվեց.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է ՀԽ քարտուղար ընտրել ԵՊՀ արաբագիտության ամբիոնի վարիչ Հայկ Քոչարյանին:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի 2024-2025 ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվության լսում և գնահատում:

Հարցի զեկուցող ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց 2024-2025 ուսումնական տարվա հաշվետվությունը՝ անդրադառնալով կրթության, գիտության, միջազգայնացման, հաղորդակցության, ենթակառուցվածքների ու միջավայրի լավարկմանն ուղղված ծրագրերին, արձանագրած հաջողություններին, ձեռքբերումներին ու մարտահրավերներին:

Նրա խոսքով՝ 2024–2025 ուսումնական տարին Երևանի պետական համալսարանի համար կարելի է բնութագրել որպես ռազմավարական մեկնարկի և համակարգային վերափոխման առաջին ամբողջական փուլ: Ըստ նրա՝ սա այն տարին էր, երբ ԵՊՀ-ն արդեն ոչ թե ձևակերպում էր իր զարգացման ուղղությունները, այլ իրագործում էր դրանք՝ արձանագրելով հստակ չափելի արդյունքներ, սակայն գիտակցելով, որ խոսքը երկարաժամկետ փոփոխությունների մասին է: 2025–2030 թվականների զարգացման ռազմավարության ընդունումը համալսարանի կյանքում նշանավորեց որակապես նոր շրջափուլ, երբ առաջնահերթությունը տրվում է ոչ թե առանձին նախաձեռնություններին, այլ փոխկապակցված քաղաքականություններին, համակարգային գործիքներին և կայուն ինստիտուցիոնալ լուծումներին: Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում մեր հիմնական նպատակը հենց այդ ռազմավարության տրամաբանությունը համալսարանի առօրյա գործառույթների մեջ ներդնելն էր:

ԵՊՀ ռեկտորի խոսքով՝ Երևանի պետական համալսարանի զարգացման ռազմավարության առաջնահերթ ուղղություններից մեկը կրթության բովանդակության և դասավանդման մեթոդաբանության արդիականացումն է՝ միտված արձագանքելու գիտելիքահենք տնտեսության և բարձրագույն կրթության գլոբալ միջավայրի փոփոխվող պահանջներին: Ռեկտորը նաև տեղեկացրեց, որ 2024–2025 ուսումնական տարում ԵՊՀ է դիմել 3437 դիմորդ, որոնցից ընդունվել է 2414-ը, ընդ որում՝ 485-ը՝ անվճար, 1929-ը՝ վճարովի համակարգով:

Հովհաննես Հովհաննիսյանը շեշտեց, որ ընթացիկ ուսումնական տարում ԵՊՀ-ն տարբեր ոլորտներում արձանագրել է կարևոր հաջողություններ և տեսանելի արդյունքներ:

Միջազգայնացման համատեքստում ԵՊՀ-ն հաշվետու տարում ստորագրել է 17 նոր պայմանագիր օտարերկրյա գործընկերների հետ: Լիլի համալսարանի (Ֆրանսիա) հետ համագործակցությամբ մեկնարկել է «Միջազգային և գործարար հաղորդակցություն» կրկնակի դիպլոմով մագիստրոսական ծրագիրը: Զուգահեռաբար կատարվել է Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի 6 կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրում ASIIN գործակալության կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում Intranet համակարգում գրանցվել է 27 մենագրություն, 245 գիտաժողովի նյութ և 1225 գիտական հոդված, որոնցից 711-ը ներկայացված է միջազգային գիտական շտեմարաններում, ինչպես նաև ԵՊՀ գիտական պարբերականներում: Գրանցվել է 5

նոր արտոնագիր: Հաշվետու տարում 78 աշխատակից ստացել է ճանապարհորդական դրամաշնորհ:

ԵՊՀ-ն շարունակում է լինել ՀՀ բուհերի շարքում ԲԿԳԿ-ի հետ արդյունավետ համագործակցության առաջատարը: Դրա վկայությունն է 2025 թվականին 88 գիտական թեմաների ֆինանսավորման ապահովումը, ինչպես նաև համատեղ կազմակերպված միջոցառումները:

Գիտահետազոտական ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ արձանագրվել է էական առաջընթաց: 2025 թվականին ԲԿԳԿ-ի կողմից ԵՊՀ-ին տրամադրվել է 10 նոր գիտական սարքավորում՝ ավելի քան 1 միլիարդ 75 միլիոն դրամ ընդհանուր արժեքով, իսկ «Fast ADVANCE» ծրագրի շրջանակում ձեռք է բերվել 23 սարք և սարքավորում:

Նոր չափանիշներին համապատասխան և հաստատված պլան-ժամանակացույցի համաձայն՝ հաշվետու տարում վերանորոգվել և կահավորվել են 10 հոսքային և 5 քննական լսարաններ, ինչպես նաև Քիմիայի և Կենսաբանության ֆակուլտետներում՝ յուրաքանչյուրում 2 լաբորատորիա, և 2 լաբորատորիա Ֆիզիկայի ինստիտուտում: Բացի դրանից՝ նորոգվել են Սոցիոլոգիայի ֆակուլտետի, Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի, ինչպես նաև Ֆիզիկայի ինստիտուտի միջանցքները: Համալսարանի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել ուսանողների համար հանգստի, անհատական և խմբային աշխատանքի հնարավորությունների ստեղծմանը:

Օրակարգի 2-րդ հարցի քվեարկության արդյունքները**. կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Լսելով 2024-2025 ուսումնական տարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության վերաբերյալ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի հաշվետվությունը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ 2024-2025 ուսումնական տարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2024-2025 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի կառուցվածքի հաստատում:

Զեկուցող ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ՀԽ հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ կառուցվածքը՝ նշելով, որ առաջարկվում է «Մանրէաբանական, կենսավերականգման գիտական խումբ»-ը դարձնել «Մանրէաբանական կենսավերականգման խումբ», ինչպես նաև «Օրգանական թափոնների կենսաքիմիական փոխակերպման և մանրէաբանական արտադրության խումբ» ձևակերպման մեջ շտկել առկա տառասխալը:

Օրակարգի 3-րդ հարցի քվեարկության արդյունքները**. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի հաստիքացուցակի հաստատում:

Զեկուցող ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը Խորհրդին ներկայացրեց ԵՊՀ 2026 թվականի հաստիքացուցակը՝ առաջարկելով կատարել հետևյալ փոփոխությունները. 6.1 Հաշվարկային նյութագիտության լաբորատորիայի «Գիտական աշխատող 2.00 դրույք»-ը փոխարինել «Գիտական աշխատող 3.00 դրույք»-ով, իսկ «Կրտսեր գիտական աշխատող 1.50 դրույք»-ը՝ «Կրտսեր գիտական աշխատող 0.50 դրույք»-ով:

Օրակարգի 4-րդ հարցի քվեարկության արդյունքները**. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 7-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի եկամուտների և ծախսերի համախմբված նախահաշվի հաստատում:

Զեկուցող Հովհաննես Հովհաննիսյանը ՀԽ հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ 2026 թ. եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը (բյուջե): Ըստ որի՝ 2026 թվականի եկամուտների և ծախսերի համախմբված նախահաշիվը ներառում է Երևանի պետական համալսարանի և Իջևանի մասնաճյուղի ֆինանսական ցուցանիշները և ձևավորվել է համալսարանի կրթական, գիտական և կառավարչական գործունեության ֆինանսական շարունակականության, գործառնական կայունության և ռեսուրսների օպտիմալ բաշխման ապահովման նպատակով:

2026 թվականի նախահաշիվը կազմվել է 585 մլն ՀՀ դրամ դեֆիցիտով, ինչը ոչ թե կառուցվածքային դեֆիցիտ է, այլ ունի ժամանակային/հաշվառման բնույթ՝ պայմանավորված հաշվետու նախորդ ժամանակաշրջաններում ստացած դրամաշնորհային և նպատակային ֆինանսավորումներով, որոնց ծախսային պարտավորությունների իրականացումը նախատեսվում է 2026 թվականին՝ ստեղծելով մուտքերի և ծախսերի ժամանակային անհամապատասխանություն:

Հ. Հովհաննիսյանը մատնանշեց, որ դեֆիցիտի ամբողջ ծավալը լիովին ապահովված է նախորդ տարիներից կուտակված դրամական միջոցների մնացորդով, հետևաբար 2026 թվականի բյուջեն չի ստեղծում վճարունակության կամ պարտավորությունների սպասարկման ռիսկ համալսարանի համար: Ըստ նրա՝ համալսարանն ունի դրամական բավարար ծածկույթ պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ առանց արտաքին ֆինանսավորման ներգրավման անհրաժեշտության:

ԵՊՀ ռեկտորը ներկայացրեց, որ բյուջեի կազմման գործընթացի հիմքում են հաշվետու նախորդ տարիների կատարողական ցուցանիշների վերլուծությունը, ընթացիկ ֆինանսական և

համալսարանի ռազմավարական պարտավորությունների հաշվառումը, առաջնահերթությունների հետ համադրումը:

Այդ վերլուծության արդյունքում նույնականացվել են ծախսերի կայուն բաղադրիչները, զարգացման ուղղությունները և օպտիմալացման ներուժ ունեցող հոդվածները: Բյուջետավորման գործընթացը իրականացվել է ստորաբաժանումների մասնակցային մոդելով, որի շրջանակում կառուցվածքային ստորաբաժանումները ձևավորել և ներկայացրել են իրենց ֆինանսական պահանջները՝ հիմնավորելով գործունեության ծավալներով, ծրագրային անհրաժեշտությամբ և ակնկալվող արդյունքներով:

Ներկայացված պահանջները վերլուծվել են ֆինանսական, բովանդակային և ռազմավարական համադրման դիտանկյուններից: Հովհաննես Հովհաննիսյանը նշեց նաև, որ 2026 թվականի համար նախատեսվում է տեղակալման կարգով սահմանված՝ հինգ տարվա երկարաժամկետ պայմանագրեր ունեցող պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատակիցների աշխատավարձերի բարձրացում շուրջ 30%-ով: 2026 թվականին նախահաշվով ևս նախատեսված է տարեվերջյան 13-րդ աշխատավարձ և ամռանը վճարվող 50%-ի չափով պարգևատրում:

Օրակարգի 5-րդ հարցի քվեարկության արդյունքները**. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 4:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 8-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2026 թվականի եկամուտների և ծախսերի համախմբված նախահաշիվը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից:

6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից կնքված մեկ հարյուր միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի հաստատում:

Զեկուցող Հովհաննես Հովհաննիսյանը ՀԽ հաստատմանը ներկայացրեց 100 միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող պայմանագրերը:

Օրակարգի 6-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 18, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ***որոշում է****.*

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊ-ի միջև 13.03.2025 թ. կնքված առողջության ապահովագրության ծառայությունների մատուցման N ԵՊՀ-ՀԲՄԾՁԲ-25/3 պայմանագիրը և 14.04.2025 թ. փոփոխությունների կատարման N 1 համաձայնագիրը:

2. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի, «ԷՏԱԼՈՆ ԳՐՈՒՊ 20» ՍՊԸ-ի և «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» ՍՊԸ-ի միջև 10.01.2025 թ. կնքված կապալային աշխատանքների կատարման N ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-24/3 պայմանագիրը և 28.02.2025 թ. փոփոխությունների կատարման N 1 համաձայնագիրը:

3. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և «ՆիկՕ Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի միջև 22.10.2025 թ. կնքված տիպային լսարանների համար կահույքի պատրաստման աշխատանքների կատարման գնման N ԵՊՀ-ԲՄԱՇՁԲ-25/1 պայմանագիրը:

4. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի միջև 01.12.2025 թ. կնքված նվիրաբերության N1111-12011/10-3 պայմանագիրը:

5. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի միջև 30.01.2025 թ. կնքված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցման մասին N 12004/10-3 պայմանագիրը և 11.12.2025 թ. փոփոխությունների կատարման N 12004/10-3-2025-Հ համաձայնագիրը:

6. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի և ՀՀ ԿԳՄՄՆ-ի միջև 31.03.2025 թ. կնքված հանձնարարության N 09.06.01.29 պայմանագիրը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Խորհրդի նախագահ՝ **Ս. Պապիկյան**

Խորհրդի քարտուղար՝ **Հ. Քոչարյան**